CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

(իրավական իրազեկում)

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆ 2024

CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Անվճար բժշկական օգնությունը և սպա-սարկումն իրականացնելու իրավական հիմքը...2

2. Անվճար հիմունքներով բժշկական օգնության ծավալները 4

2.1. Նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման առանձին ծառայությունները 4

2.2. Առողջության առաջնային պահպանման ծառայություններ 6

2.3. Դեղերի տրամադրումը.....8

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

(իրավական իրազեկում)

1. Անվճար բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնելու իրավական հիմքը

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից 2004 մարտի 4-ին ընդունված՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշման N12 հավելվածի համաձայն՝ անվճար հիմունքներով:

Մասնավորապես՝ նշված կարգի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հայտարարված արտակարգ իրավիճակներում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում **տուժած անձանց** (այսուհետ՝ տուժած անձինք) բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է ***պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով***:

Տուժած անձինք են համարվում՝

1) պատերազմական գործողությունների հետևանքով տարհանված՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության քաղաքացիները.

2) Արցախի Հանրապետությունում հաշվառված քաղաքացիները՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրված էլեկտրոնային ուղեգրի առկայության դեպքում.

3) Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հայտարարված արտակարգ իրավիճակներում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում խեղում, վնասվածք, հիվանդություն ստացած անձինք՝ արտակարգ իրավիճակներում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության մասով:

Տուժած անձի՝ **անձը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում** հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից տրամադրված՝ ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը կամ բնակչության պետական ռեգիստրից կամ այլ տեղեկատվական շտեմարաններից տրված

քաղվածքը, եթե անձի տվյալներն առկա են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի կամ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը հասանելի այլ տեղեկատվական շտեմարաններում:

Նշված քաղվածքը տրամադրվում է տուժած անձին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրած համապատասխան բժշկական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից ներկայացված հարցման հիման վրա, որի մեջ նշվում են անձի անձնական տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը)։ Առկայության դեպքում հարցմանը կցվում է մեկ գունավոր լուսանկար և անձը հաստատող որևէ փաստաթղթի պատճեն։

2. Անվճար հիմունքներով բժշկական օգնության ծավալները

2.1. Նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման առանձին ծառայությունները

Տուժած անձինք օգտվում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնությունից և սպասարկումից՝ նշված որոշմամբ սահմանված ծավալներով, այդ

թվում՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող հետևյալ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից.

1) գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժում (ներառյալ՝ միկրոկաթետերի, միկրոպարույրի և օնիքսի արժեքը).

2) կլիպսների օգտագործում՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ.

3) շունտավորող համակարգերի օգտագործում՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ.

4) էնդովասկուլյար ռեկոնստրուկտիվ բուժում՝ նյարդավիրաբուժական հիվանդությունների ժամանակ.

5) խոշոր, պերիֆերիկ և կորոնար անոթների ստենտավորում՝ ինչպես դեղապատ, այնպես էլ ոչ դեղապատ ստենտներով, բալոնային դիլատացիա, անգիոպլաստիկա.

6) սրտի բաց վիրահատություններ, առրտակորո-նար շունտավորում.

7) սրտի փականների պրոթեզավորում.

8) սրտի ռիթմը վարող սարքերի (Pacemaker) իմպլանտացիա.

9) փորոքների կծկումները վերասինքրոնիզացնող ՍՌՎՍ իմպլանտացիա.

10) կարդիովերտեր դեֆիբրիլյատորների իմպլանտացիա.

11) լրացուցիչ անցուղիների կաթետերային աբլացիա.

12) վերել և վայրէջ առրտայի վիրահատություններ՝ անկախ եղանակից.

13) բալոնային պլաստիկա կամ վալվուլոտոմիա սրտի բնածին արատների դեպքում.

14) տրանսկաթետերային եղանակով սրտի վիրահատական միջամտություններ՝ սրտի բնածին և կառուցվածքային (ձեռքբերովի) արատների դեպքում.

15) սիներակի (Վ.Կավա/V.Cava) ֆիլտրի տեղադրում (ներառյալ ֆիլտրի արժեքը), այդ թվում՝ ժամանակավոր.

16) բացառապես վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ օգտագործվող մետաղական կոնստրուկցիաների՝ հարթակների, պտուտակների և շյուղերի կիրառում (այդ թվում՝ հարթակների, պտուտակների և շյուղերի արժեքը).

17) քարափշրում (լիթոտրիպսիա)՝ հեռահար, պերկուտան, ուրեթերոռենոսկոպիկ.

18) սկլերոպլաստիկա, կեռատոպլաստիկա։

2.2. Առողջության առաջնային պահպանման ծառայություններ

Բժշկի ընտրությունը

Տուժած անձը պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով առողջության

առաջնային պահպանման ծառայություններ է ստանում իր կողմից կամավոր ընտրված բժշկի **(ընտանեկան բժշկի, թերապևտի, մանկաբույժի)** մոտ:

Համաձայն Առողջապահության նախարարի՝ 2023 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 48-Ն հրամանի՝ յուրաքանչյուր անձ կարող է առողջության առաջնային պահպանման ծառայություններ ստանալ միայն այն առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ, որին ինքը կընտրի կամավոր և որի մոտ կգրանցվի՝ ըստ սահմանված ընթացակարգի:

Յուրաքանչյուր բնակիչ, անկախ Հայաստանի Հանրապետությունում իր հաշվառման վայրից, իրավունք ունի ընտրելու իր մշտական բնակության վայրի մարզի վարչական սահմաններում, իսկ Երևան քաղաքի դեպքում՝ քաղաքի վարչական սահմաններում գործող ցանկացած առողջության առաջնային պահպանման հաստատությունում աշխատող առողջության առաջնային պահպանման բժիշկ:

Բնակիչը չի կարող ընտրել առողջության առաջնային պահպանման բժիշկ, եթե.

1) լրացել են առողջության առաջնային պահպանման բժշկի կողմից սպասարկվող և նշված հրամանով հաստատված բնակիչների կողմնորոշիչ թվերի առավելագույն չափաքանակները:

2) բնակչի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգով սահման-ված պահանջներին:

3) առողջության առաջնային պահպանման հաս-տատության և բնակչի մշտական բնակության վայրի միջև եղած հեռավորության պատճառով (բացառությամբ կցագրված բուժակ-մանկաբար-ձական կետերի) առողջության առաջնային պահ-պանման բժիշկը չի կարող մատուցել բժշկական օգնության հետևյալ ծառայությունները՝ տնային այցելություններ և հակահամաճարակային հսկո-ղություն:

2.3. Դեղերի տրամադրումը

Տուժած անձին տրամադրվող պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019թ. մայիսի 30-ի N 642-Ն որոշմամբ սահմանված կարգով հատկացվող դեղերի տրամադրումը:

Նշված որոշման հավելվածով սահմանվում է այն հիվանդությունների ցանկը, որոնց դեպքում դեղերը շահառուներին հատկացվում են **դրանց արժեքի լրիվ փոխհատուցմամբ,** մասնավորապես՝

1. Տուբերկուլյոզ (հակատուբերկուլյոզային դեղեր)

2. Հոգեկան հիվանդություններ (հոգեմետ դեղեր)

3. Չարորակ նորագոյացություններ (հակաուռուցքային դեղեր, հեմոֆիլիայի դեղեր, ցավազրկող դեղեր, թմրադեղեր)

4. Շաքարային և ոչ շաքարային դիաբետ (հակադիաբետիկ դեղեր)

5. Էպիլեպսիա (հակացնցումային դեղեր)

6. Սրտամկանի ինֆարկտ (դուրսգրման օրվանից առաջին 2 ամիսը՝ արյան կորոնար շրջանառությունը բարելավող դեղեր)

7. Պարբերական հիվանդություն (կոլխիցին և կամ այլ դեղեր)

8. Սրտի փականների արատներ (հակակոագուլյանտներ՝ պրոթեզավորումից հետո)

9. Մալարիա (հակամալարիային դեղեր)

10. Քրոնիկ երիկամային անբավարարություն (երիկամային փոխպատվաստման և (կամ) ծրագրային հեմոդիալիզի դեպքերում (ցիկլոսպորին, էրիթրոպոետին, մոֆետիլի միկոֆենոլատ և (կամ) դրանց համարժեք այլ դեղեր)

11. Ֆենիլկետոնուրիա (ֆենիլալանին չպարունակող մանկական կեր)

12. Անհաս նորածինների շնչառական խանգարման համախտանիշ (բերակտանտ ակտիվ նյութ պարունակող դեղեր)

13. Մարդու իմունային անբավարարության (ՄԻԱՎ) վարակ (դեղեր, թեստեր)

14. Հիպոֆիզային գաճաճություն ախտանիշ (հորմոնային դեղեր)

15. Վիրուսային հեպատիտ Ց հիվանդություն (հակավիրուսային դեղեր):

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Համաձայն առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության[1]՝ անգամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալուց հետո էլ տուժած անձը շարունակում է բժշկական օգնություն և սպասարկում ստանալ պետության կողմից երաշխավորված **անվճար պայմաններով:**

[1] Հիմք՝ Կենտրոնի կողմից 27.08.2024թ. տրված N1235536 հարցմանը ՀՀ առողջապահության նախարարության կողմից 02.09.2024թ. տրված ԱԱԳ/ՊԳ/25733-24 պատասխան: